

ՂԱՐԱԲԱՂՆ ՈՒ ՆԱԽԻՋԵՒՈՆԸ

ԻՐԵՆՑ ՕՐԻՆԱԻՈՐ ՏԻՐՈՉ

Ամէն անգամ որ այսպէս կոչուած «ներքին հոգերու» հարց ծագի, Երեւանի մէջ կը դրանուին պաշտօնական անձնատուութիւններ, - եւ արտասահմանի մէջ կը գտնուին զանոնք հաւատարմօրէն կրկնողներ, - որոնք կ'ըսեն թէ, օրինակ, Ղարաբաղի կամ Նախիջևեանի որս'ւն մաս կազմելը խորքին մէջ տարբերութիւն չ'ընեն, թէ Սովետական Հայաստան եւ Սովետական Ազգայնական «եղբայր հանրապետութիւններ» են եւ անոնց բնակիչները բոլորն ալ սովետական քաղաքացիներ են, եւ այլն: Պէտք է ըսել այսպէս խօսող պարոններուն, թէ իրենց պատճառարանութիւնը կամ լուսարանութիւնը դժուարի՛ համ կուտայ դժբախտարար: Եթէ իսկապէս տարբերութիւն չ'ընեն Ղարաբաղի կամ Նախիջևեանի որս'ւն պատկանիլը կամ որս'ւն իշխանութեան տակ գտնուիլը, այն ատեն թող պատկանին Սովետական Հայաստանի՛ն եւ ոչ թէ ուրիշին, - մանաւանդ որ անոնց զուտ հայկական հոգ ըլլալը ոչ ոք կրնայ ուրանալ: Տրամարանական է բոլորովին որ յետայսու անոնք մաս կազմեն Հայկական Հանրապետութեան հողամասին, եւ այլեւս քիչ մըն ալ Պաքուի մէջ մարդիկ «խորքին մէջ տարբերութիւն չ'ընեն» ըսեն ուկրկնեն:

1920 Դեկտեմբեր 4ին, Սովետական Ռուսաստանի պաշտօնաթերթ «Փրատա»ի մէջ, այն ատեն ազգութիւններու կոմիսար եղող Ստալինի ստորագրութիւնը կրող՝ «Կեցցէ՛ Սովետական Հայաստանը» խորագրեալ յօդուածին մէջ կատարուեցաւ հետեւեալ կարեւոր յայտնութիւնը. - «Դեկտեմբերի 1ին Սովետական Ազգայնական յօժարակամ հրաժարում է վիճելի գաւառներից եւ յայտարարում է Չանգեզուրը, Նախիջևեանը, Լեռնային Ղարաբաղը Սովետական Հայաստանին յանձնելու մասին»: Տարակոյս չկայ որ այս կարեւոր յայտարարութիւնը բնող ազգայնական իշխանութիւնները, Նախիջևեանի գլխաւորութեամբ, կ'ընդունէին Չանգեզուրի, Նախիջևեանի եւ Լեռնային Ղարաբաղի հայկական ըլլալը, եւ արդար կը գտնէին անոնց վերագործուիլը Հայկական Հանրապետութեան: Այդ յայտարարութեանէն ետք միայն Չանգեզուրը մաս կազմեց Սովետական Հայաստանին, իսկ Նախիջևեանը եւ Լեռնային Ղարաբաղը մնացին ազգայնական տիրապետութեան տակ, եւ յետոյ «օժտուեցան» այլանդակ օրինակի մակերեսով, - առաջինը դարձաւ ինքնավար հանրապետութիւն, իսկ երկրորդը՝ ինքնավար մարզ:

Արդ, եթէ 1920 Դեկտ. 1ին Պաքուի գեկավարները, Մոսկուայի ազգութիւններու կոմիսարը կամ նախարարը եւ պաշտօնաթերթ «Փրատա»ն կ'ընդունէին «վիճելի գաւառներուն» հայկական ըլլալը եւ արդար կը գտնէին որ անոնք «յանձնուէին» հայկական պետութեան, պատճառ մը չկար որ 1936ին տարբեր մտա-

ծէին, - երբ կ'որդեգրուէր Ս. Միութեան նոր սահմանագրութիւնը, - պատճառ մը չկար որ 1957ին տարբեր խորհէին՝ երբ Ս. Միութեանէն ներս կը կատարուէին բազմաթիւ սահմանային սրբազրութիւններ կամ հողային լուրջ կարգադրութիւններ, եւ պատճառ մը չկայ հիմատարբեր մտածելու: Արդարութեամբ եւ տարրական իրաւունքի՛ գործ մըն է Նախիջևեանի եւ Լեռնային Ղարաբաղի վերագործուիլը իրենց իսկական տիրոջ՝ հայ ժողովուրդին: Սովետական դաշնակցային իշխանութիւնները բազմաթիւ անգամներ կատարած են սահմանային սրբազրութիւններ, ջնջած են ինքնավար մարզեր եւ նոյնիսկ հանրապետութիւններ, ստեղծած են նորեր եւ ամբողջ նահանգներ փոխանցած են մէկ հանրապետութեանէն միւր: Կը բաւէ յիշել հոս միայն քանի մը յատկանշական պարագաներ:

Այսպէս, 1957ին, սովետական իշխանութիւնները մէկ հարուածով վերականգնեցին պալքաաներու, շէջէններու, ինքուշներու, քալմիքներու եւ քարաշայներու ազգային ինքնավարութիւնը եւ անոնց համար ստեղծեցին ազգային օճախներ (ԹՄՍՍ, 1957 Փետր. 12ի հաղորդագրութիւն): Եւ այդ տարիներուն, ամբողջ Խրիմը եւ այլ հողամասեր Սովետական Ռուսաստանէն փոխանցուեցան Սովետական Ուքրանիոյ: Եւ ինչ որ իսկապէս զարմանալի է, Ստալինի մահէն եւ Պերիալի սպանութենէն շուրջ չորս տարի ետք, Վրաստանի՛ ի նպաստ հողային կարգադրութիւններ եղան պաշտօնապէս, եւ փոփոխութիւններու ենթարկուեցաւ Անդրկովկասի քարտէսը: Արդարեւ, արտասահմանի մէջ դրեթէ ծանօթ չէ, - իսկ Երեւանի մէջ քիչերու ծանօթ է, - այն իրողութիւնը թէ 1943ի եւ 1957ի միջեւ երկու անգամ սահմանային սրբազրութիւն եղաւ ի նպաստ Սովետական Վրաստանի: Առաջին սրբազրութիւնը եթէ տեղի ունեցաւ պատերազմի ընթացքին՝ երբ վրացի Սրտալին ու Պերիալ բացարձակ ինքնակալութիւն հաստատած էին, երկրորդը տեղի ունեցաւ անոնց մահէն շուրջ չորս տարիներ ետք: Ըստ այս փոփոխութեանց, ուրեմն, երեք գաւառներ կցուեցան Վրաստանին. առաջին երկու գաւառները կը գտնուին Վրաստանի հիւսիս - արեւմուտքը, - ա) Էլիզբուլ լեռան շրջակայքը, բ) Քուպան գետի վերի հոսանքին աւազանը, Քրլուխօրի եւ Թեպերտա փոքր քաղաքներով առնուած կապարտինեան Աւստոնոմ (ինքնավար) Հանրապետութեանէն եւ Սթաւրոփոլ Քրայէն (այսինքն չէրքէզներու շրջանէն): Ասիկա շուրջ չորս հազար քառ. ըմ. հողամաս է: Իսկ երրորդ գաւառը, որ շուրջ երկու հազար քառ. ըմ. հողամաս է, կը գտնուի Վրաստանի հիւսիս-

(Շար. ը տեսնել Դ. Էջ)
«Մեծ երազի քամբուն վրայ» հատորէն

արեւելքը, Հիւսիս-Օսսեթական Աւտ. Հանրապետութեան եւ Կրոզնի Օսլլասթի հարաւը, Լարս եւ Ախսալխեւ փոքր քաղաքներով, - առնուած ինքուշ-չէչէնական շրջանէն: (Տես «Է Հիսթորի աւ Ճորճիա», Տէյվիտ Մ. Լենկ, Լոնտոն, 1962):

Եթէ 1957ին արդէն իսկ տեւապէս նախասիրութիւն վայելած եւ անընդհատ նպաստաւորուած Վրաստանի ի նպաստ սահմանային կարեւոր փոփոխութիւններ կարելի էր ընել, ինչո՞ւ կարելի չէ Սովետական Հայաստանի ի նպաստ դեռեւս 1920ին պաշտօնապէս ճանաչուած արդարութիւն ընել: Ինչո՞ւ այս երկու շափ եւ երկու կշիռը: Ինչո՞ւ կ'անտեսուի հայ ժողովուրդին անուրանալի, անժխտելի, անառարկելի իրաւունքը: Եթէ առարկուի թէ Անդրկովկասի մէջ բարդութիւններ կրնան ծագիլ, այն ատեն պէտք էնք հարց տալ, թէ միւս բոլոր հանրապետութիւններուն պարագային բարդութիւններ չէ՞ն ծագիր, եւ միայն մե՞ր պարագային բարդութիւններ կը ծագին: Արդար չէ՞ ակնկալել, որ Մոսկուայի դաշնակցային իշխանութիւնները, որոնք կը ծառանան Քոնկոյի մը կամ Կապոնի մը դէմ դործուած անիրաւութիւններու դէմ, վրդովուին նաեւ Հայկական Հանրապետութեան դէմ դործուած անարդարութեամբ եւ սրբազրեհն ալլեւս անցեալի սխալները, սկսելով դուցէ նախիջեւանով, որ թերա՞ծ շրջան է արդէն եւ կը ստատէ հայ շինարար բազուկներու: Մանաւանդ որ՝ այս անարդարութիւնները սովետական իշխանութեան դործը չեն, ժառանգուած են անոնք նախկին ուժիւններէ, եւ ուրեմն դիւրին պէտք էն ըլլալ տապալած իրաւակարգերու սխալներուն սրբազրութիւնները:

Այս առնչութեամբ կը մնայ աւելցնել, թէ Երեւանի նոր վարչութեան վայել է յարմար ատենին եւ մեծ «քաֆթով» վեր առնել «ներքին հողային հարցը», եւ ձգտիլ անոր բարեկամական եւ եղբայրական լուծումին: Արտասահմանի հայութիւնը անշուշտ թէ կը հետաքրքրուի այս հարցով, բայց հայրենասէր կազմակերպութիւնները երբեք չեն ուզեր կացութիւնը բարդացնել եւ անհարկի աղմուկ բարձրացնել: Ներքին խաղաղ լուծումի հարց է ասիկա, եւ պէտք է կարգադրուի իրարհասկացողութեամբ: Ամէն պարագայի, պէտք է մաղթել որ չուշանայ այն օրը՝ երբ հայ ժողովուրդը պէտք է տիրանայ իր արդար իրաւունքներուն: